



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

N 01-08-2025

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

«03» 07 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանին ազատությունից զրկելու համաձայնություն տալու վերաբերյալ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում 2025 թվականի մարտի 18-ին ստացվել է ՀՀ ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության և ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության ավագ օպերիվազորի պատշաճ հաղորդումն այն մասին, որ Վազգեն Պետրոսի Գալստանյանը, Արթուր Լավրենտի Սարգսյանը, Մովսես Ռուբենի Շարբաթյանը, Հայկ Սամվելի Շահնազարյանը, Տիգրան Վահեի Թովալյանը, Իգոր Թադևոսի Սարգսյանն այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ 2024 թվականի հուլիսից 2025 թվականի մարտի 14-ն ընկած ժամանակահատվածում նախապատրաստվել են իրականացնել ահաբեկչություն և իշխանության յուրացում:

Հիշյալ հաղորդման և կից ներկայացված նյութերի հիման վրա 2025 թվականի մարտի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության

գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 43-308-րդ հոդվածի 1-ին մասով և 43-419-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 58207025 քրեական վարույթը:

Քրեական վարույթով կատարված քննությամբ ձեռք են բերվել փաստական տվյալներ այն մասին, որ ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանը մի խումբ անձանց հետ նախապատրաստել է ահաբեկչություն և իշխանության յուրացում:

Այսպես.

Վազգեն Գալստանյանը, իր կողմից նախաձեռնված և ղեկավարվող «Սրբազան պայքար» անվանումով շարժումն իրականացնելու մի քանի ամիսների ընթացքում չկարողանալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ թույլատրված եղանակներով իրագործել իր կողմից շարժման առջև դրված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ստանձնելու նպատակը, 2024 թվականի նոյեմբեր ամսից սկսած նպատակադրվել է այն իրագործել ՀՀ Սահմանադրությամբ չթույլատրված եղանակով, և այդ նպատակի իրականացման համար շարժման մի շարք մասնակիցների՝ Արթուր Սարգսյանի, Արսեն Ղազարյանի, Հայկ Շահնազարյանի, Մովսես Շարբաթյանի, Տիգրան Թովալյանի, Լիդիա Մանթաշյանի, Հրայր Հակոբյանի, Կարո Օկումուշյանի, Իգոր Սարգսյանի, Արա Ռոստոմյանի, Արման Իսրայելյանի, Աղվան Արշակյանի, Արմեն Ալեքսանյանի, Միհրան Մախսուդյանի, Դավիթ Գալստյանի և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ խմբի կազմում, ձեռք են բերել ահաբեկչություն կատարելու և իշխանությունը զավթելու համար անհրաժեշտ միջոցներ և գործիքներ, ինչպես նաև դիտավորությամբ ստեղծել են այլ պայմաններ՝ այդ կերպ կատարելով իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն:

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը զավթելու իրենց հանցավոր նպատակն իրագործելու նպատակով Արթուր Սարգսյանը, Վազգեն Գալստանյանը և հանցավոր խմբի մյուս անդամները, պլանավորել են կատարել ահաբեկչություն, այն է՝ քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու և այլ ծանր հետևանքներ առաջացնելու վտանգով զուգորդված հանրավտանգ արարքներ՝ այդ կերպ նպատակ հետապնդելով ահաբեկել բնակչությանը, բնակչության շրջանում առաջացնել անկառավարելի վիճակ, կազմալուծել հանրային իշխանության մարմինների

գործունեությունը և Սահմանադրությամբ սահմանված կարգով ՀՀ իշխանությունը ստանձնած անձանց՝ հարկադրել հրաժարվել դրանից:

Նախապատրաստելով նշված հանցավոր արարքների իրագործումը՝ հանցավոր խմբի անդամները, այդ թվում՝ Արթուր Սարգսյանը, 2025 թվականի հունվարից սկսած շարժման մասնակիցների և համախոհների միջոցով արդեն իսկ հավաքագրել են բազմաթիվ հարվածային խմբերում ընդգրկվող 2000-ից ավելի անձանց, խոշոր փողոցներն առանձնացնելու և գործողությունները պլանավորելու համար ձեռք են բերել Երևան քաղաքի քարտեզը, շարքից հանելու նպատակով ձեռք են բերել լուսացույցների, էլեկտրաէներգիայի և համացանցի սնուցման լարերի բաժանարարների գտնվելու վայրերի վերաբերյալ տվյալները, պատվիրել և ձեռք են բերել պայթյուններ կատարելու և կրակոցներ արձակելու համար նախատեսված հազարավոր հրավտանգ միջոցներ, ինչպես նաև տրանսպորտային միջոցների անվադողերը վնասելու և տրանսպորտային շարժը կաթվածահար անելու համար պիտանի մետաղական սրածայր դետալներ՝ «աստղիկներ», տրանսպորտային միջոցների ապակիներին և ճանապարհներին լցնելու նպատակով՝ ներկեր և յուղեր, այդ միջոցները պահել են համապատասխան թաքստոցներում, շարունակել են հարվածային խմբերում ընդգրկվող անձանց հավաքագրելուն ուղղված գործողությունները՝ միաժամանակ խմբերի ղեկավարների հետ հանդիպումների ժամանակ ունեցած ելույթներով վերջիններիս վստահեցնելով, որ նախատեսվող գործողությունները հաջողության հասնելու միակ եղանակն են և վերջիններիս հրահանգելով իրենց հերթին միջոցներ ձեռնարկել խմբերի անդամների զգոնությունը, պատրաստակամությունը, տրված հանձնարարությունը ցանկացած գնով կատարելու կամքն ամրապնդելու ուղղությամբ:

Արթուր Սարգսյանը, Վազգեն Գալստանյանը և հանցավոր խմբի մյուս անդամները չեն կարողացել սկսել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցանքների՝ ահաբեկչության ու իշխանությունը զավթելու եղանակով այն յուրացնելու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ազգային ժողովի լիազորություններին ՀՀ սահմանադրությամբ չնախատեսված եղանակներով տիրանալու օբյեկտիվ կողմը կազմող համապատասխան գործողությունների կատարումը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից դրանք նախապատրաստելու փուլում բացահայտելու պատճառով:

2025 թվականի հուլիսի 3-ին թիվ 58207025 քրեական վարույթով հսկող դատախազը առաջարկություններ է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող Արթուր Սարգսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությամբ ՀՀ Ազգային ժողովին դիմելու վերաբերյալ:

Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանում առկա փաստական տվյալների համադրումը վկայում է Արթուր Սարգսյանին ազատությունից զրկելու՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պայմանների և հիմքերի առկայության մասին:

Այսպես.

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) (...).

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

(...):»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...).

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(...):

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Խափանման միջոցներն են կալանքը և այլընտրանքային խափանման միջոցները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի համաձայն՝

«1. Խափանման միջոց չի կարող կիրառվել, եթե բացակայում է մեղադրյալի կողմից իրեն վերագրվող հանցանքը կատարելու մասին հիմնավոր կասկածը:

2. Խափանման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) մեղադրյալի փախուստը կանխելու համար կամ

2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար կամ

3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար:

3. Խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.

(...).

3) չխոչընդոտել քրեական վարույթին, այդ թվում՝ ապօրինի չմիջամտել ապացուցման գործընթացին.

4) այլ վայր մեկնելիս վարույթն իրականացնող մարմնին նախապես տեղեկացնել իր գտնվելու նոր վայրի և իր հետ հաղորդակցվելու միջոցների մասին.

(...)»:

Նույն օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կալանքը դատարանի որոշմամբ մեղադրյալին օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ազատությունից զրկելն է՝ օրենքով և դատարանի այդ որոշմամբ սահմանված ժամկետով:

2. Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլ ընտրանքային խափանման միջոցների կիրառումն անբավարար է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար:

(...):

4. Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պարճառաբանված հաստատվել են սույն օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված իրավաչափության համապատասխան պայմանները: Դատական վարույթում կալանքի կիրառման համար բավարար է դատարանի կողմից նշված պայմանների պարճառաբանված հաստատումը:

(...)»:

Նույն օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Անձին կարելի է կալանքի տակ պահել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է վարույթի բնականոն ընթացքն ապահովելու համար, և քանի դեռ առկա են անձին կալանքի

տակ պահելու հիմքերը, սակայն ամեն դեպքում այդ ժամկետը չի կարող գերազանցել սույն հոդվածով կալանքի տակ պահելու համար սահմանված առավելագույն ժամկետները:

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն.

«1. Հանցագործության նախապատրաստություն է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայման ստեղծելը, եթե անձն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում սկսել դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

2. Եթե դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայման ստեղծելն այլ ավարտված հանցագործության հատկանիշներ է պարունակում, ապա արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ»:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն.

«1. Պայթյուն, հրկիզում կամ այլ հանրավտանգ արարք կատարելը կամ դրա իրական սպառնալիքը կամ շինություն կամ տրանսպորտային, հաղորդակցության կամ կապի միջոց, այլ հաղորդակցության ուղի զավթելը կամ պահելը՝ զուգորդված քաղաքացիական անձին կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձին կյանքից զրկելու, առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու կամ այլ ծանր հետևանք առաջացնելու վտանգով, որի նպատակն է բնակչությանը կամ դրա առանձին խմբին ահաբեկելը, հանրային իշխանության մարմինների գործունեությունը կազմալուծելը, հանրային իշխանության ներկայացուցչին, պետական կամ հանրային ծառայողին կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչին կամ այլ կազմակերպությունում ծառայող անձին որևէ արարք կատարելուն կամ հանցավորի այլ պահանջը կատարելուն հարկադրելը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ահաբեկչություն համարվող ցանկացած այլ արարք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

(...)»:

Նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի համաձայն.

«1. Իշխանությունը զավթելը՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու

սպառնալիքի միջոցով, ինչպես նաև Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության կամ Սահմանադրական դատարանի լիազորություններին տիրանալը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

(...)»:

Կալանավորման պայմաններից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, դիրքորոշումներ այն մասին, որ հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որը բավարար կլինի անաչառ դիտորդին համոզելու, որ տվյալ անձը հանցանք է կատարել¹:

Հիմք ընդունելով Եվրոպական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան) «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» կապակցությամբ իր նախադեպային իրավունքում փաստել է, որ (...) «*հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած*» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է (...): Կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատվող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: (...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ ենթադրություն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պարզաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ քացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված»²:

Է.Եղիազարյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «կալանքը որպես խափանման միջոց կիրառելու յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի անձի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունը՝ ավելի բարձր նշանակության բարիքի, այն է՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝

¹ Տե՛ս *Ilgar Mammadov v. Azerbaijan, Erdagöz v. Turkey, Fox, Campbell and Hartley v. the United Kingdom* գործերով Եվրոպական դատարանի վճիռները:

² Տե՛ս Վահրամ Գևորգյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի փետրվարի 24-ի որոշման 19-23-րդ կետերը:

ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, անձի ազատության սահմանափակման հիմնավորվածությունը: Մինչդարական վարույթում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու համար հիմնավոր կասկածի առկայությունն ունի հիմնարար նշանակություն, քանզի դրա բացակայության պայմաններում անձի ազատության ցանկացած սահմանափակում կհամարվի ի սկզբանե ապօրինի: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ իրավասու մարմինը պետք է ներկայացնի փաստեր կամ տեղեկություններ, որոնք կհամոզեն դատարանին, որ անձը հիմնավոր կերպով է կասկածվում /մեղադրվում/ ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Այսինքն՝ քրեական հետապնդման մարմինները պետք է ներկայացնեն կասկածը հիմնավորող որոշակի փաստական հանգամանքներ, իսկ դրա վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն պարճառաբանված և, միևնույն ժամանակ, չպետք է պարունակեն իրավական գնահատականներ անձի մեղավորության կամ անմեղության հարցի առնչությամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալ հանգամանքները՝

- հիմնավոր կասկածի բացակայության դեպքում անձի ազատության իրավունքը սահմանափակելն ինքնին ապօրինի է,

- հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական տվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանգանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պարճառաբանված»³:

(...):»:

Հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած.

Վերոշարադրյալ իրավակարգավորումների, Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո գնահատման ենթարկելով սույն քրեական վարույթով ձեռք բերված փաստական տվյալները՝ պետք է արձանագրել, որ դրանք իրենց համակցության մեջ բավարար են **ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանի** կողմից իրեն մեղսագրվող առերևույթ հանցավոր արարքը կատարած լինելու հիմնավոր կասկածի շեմը հաղթահարված համարելու համար:

Այդ հանգամանքը հիմնավորվում է քրեական վարույթի նյութերում առկա հետևյալ փաստական տվյալներով.

³ Տե՛ս *Էդգար Եղիազարյանի* վերաբերյալ թիվ ԵԱՆԴ/0017/06/16 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի հունիսի 22-ի որոշման 15-րդ կետը:

1. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի համապատասխան որոշումների հիման վրա «Թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված ձայնագրառումներով, արձանագրություններով և դրանք զննելու մասին արձանագրություններով, որոնց համաձայն՝

➤ **2024 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 23:04-ին, Վ.Գալստանյանն իր բնակության հասցեում հանդիպում է ունեցել Արթուր Սարգսյանի, Մովսես Շարբաթյանի և մի տղամարդու հետ, որի ընթացքում կայացել է հետևյալ զրույցը.**

«Վ.Գալստանյան - Ես մտադիր եմ ամսի 13, 14-ից անցնել ինտենսիվ գործողությունների: Հիմա մտքիս մեջ մոտավորապես պլաններ կա ինչ ա ըլնելու: Հիմա մնում ա՝ տեսնենք դրսի եղած չեղածին ոնց ենք կարում ժամանակային առումով հարմարացնել:

Վ.Գալստանյանը վստահեցնում է բոլորին, որ հազար տոկոսանոց հաղթանակ է լինելու, կլինի օրակարգ և հստակ ծրագիր, և որ ամենակարևորը այդ ծրագրին կարգապահորեն հետևելն է:

Վ.Գալստանյան - Երբ որ ասում եմ ծրագիր, էդ ծրագիրը, էդ շղթան ա, օղակը: Էդ շղթան ա, կապ չունի՝ 5000 մարդ էլ լինի, հարցը լուծվելու ա հաստատ: Կարգապահություն և հետևել շղթայական ծրագրին, վերջ: Ախպերավարի չի լինելու ոչ մի բան:

Վ.Գալստանյան - Երբ որ ասում են կարգապահություն, դա նշանակում է, որ ով ինչ ստանձնել է, կյանքի գնով կատարել: Հարկավոր է ամեն շրջանում ոչ կուսակցականների թիմ ստեղծել, և հետագայում այդ բոլորից մեկ մարմին ձևավորել: Այսինքն՝ ստեղծել կենտրոնական մարմին, որը տարբեր իրավիճակներում հստակ որոշումներ կկայացնի:

Վ.Գալստանյան - Տղե՛րք, ասում եմ՝ էս ամբողջ գործողության մեջ շղթան ա կարևոր: Շղթան՝ ոնց ենք էդ օղակները իրար կողք կպած սարքելու: Երբ որ էդ շղթան սարքվեց, մի համ սենց գիծ եղավ, շատ հեշտ ա լինելու մնացածը: Մի րոպեում բոլոր գործողությունները կանեն բոլորը: Իսկ սենց ցաք ու ցրիվ, առանձին-առանձին (...):

Տղամարդ - Հիմա էդ ամեն ինչը ե՛րբ ես ուզում սկսես սրբազան ջան, 15-ից հետո՞:

Վ.Գալստանյան - Խաչվերացի տոնին:

Տղամարդ - Հա:

Վ.Գալստանյան - Հլը տեսնենք: Կոիվը էդ էր էլի: Իմ պատկերացումով՝ եթե կազմակերպենք առաջ գնալ, ուրեմն մեր վերջին հարվածը հասցնելու վճռականություն ունեցողները լինեն պրծած ա ինքը:

Տղամարդ - Աստված ձայնդ լսի:

Վ.Գալստանյան - Որովհետև տենց ծրագիր չի եղել ու կարա լինի, ու շատ հանգիստ ու արագ հարցը փակվի:

Տղամարդ - Ես հավատում եմ:

Վ.Գալստանյան - Ես տրամադրված եմ իմ ասածին, ու իմ ասածն ու ծրագիրն անելու եմ: **Ինքը վրանգավոր ծրագիր ա կոչվում, բայց իրականանալու ա:**

Տղամարդ - Ես էդ վտանգներին համաձայն եմ:

Վ.Գալստանյան - Առանց դրա չի լինի:

Տղամարդ - Իհարկե:

Վ.Գալստանյան - Ես կարծում եմ, որ դա շատ, հիմա տղերքին չեմ ուզում ասեմ, ժամը կգա կասեմ:

Տղամարդ - Չենք էլ ուզում: Կարևորը լավ ընի:

Վ.Գալստանյան - Մի քանի խմբեր կա, մի հատ հանդիպենք, հասկանանք՝ ով ում բարեկամն ա, մնացածն արդեն կասեմ՝ ով ում բարեկամն ա: Հեշտ ա լինելու: Նայի՛, Վլադիմիր՝ ջան, հեշտ ա լինելու մի պարագայում. եթե, էլի եմ ասում, կարգապահությունը պահեցինք: Եթե էս ինչ մարդը, որ պտի էս ինչ քայլի գործողության պատասխանատվություն ստանձնի, վերցնի ու գնա մինչև վերջ անելու, էն ինչ մարդը կամ մարդիկ որ կետը վերցնի ու գնան անելու, էն ինչ տեղերն անեն, չորս-հինգ գործողություն ա պետք, ուրիշ բա պետք չի: Ինքը մնալու ա մեն-մենակ, դեմ-դիմաց:

➤ **2024 թվականի օգոստոսի 12-ին՝ ժամը 23:30-ին, Վ.Գալստանյանը բնակության հասցեում հյուրընկալել է ՀՀ ԱԺ պատգամավորներ Արթուր Սարգսյանին և Իշխան Սաղաթեյանին, որի ընթացքում տեղի է ունեցել հետևյալ զրույցը.**

«**Վ.Գալստանյան** - Ես երբեք չեմ ասել էս մասին, հիմա առաջին անգամ եմ ասում: Ինձ պետք ա տեսնեմ աչքով՝ որտեղ քանի հոգի մարդ կա, կիսել դա՝ համարելով, որ կարող ա՝ էս ինչ պահին էսի չլինի, գնան-գան, չեմ խաբում, ասում՝ եթե հարյուր հոգի կիսեմ, ուրեմն հարյուր հոգին էլ լինեն: Մեթոդը պիտի փոխվի և կարգապահությունը շատ խիստ լինի: Ի՞նչ ա մեզ պետք: Մենք որ օրը հավաքվելու ենք, էդ պիտի որոշենք՝ որ օրը: Ես

կարծում եմ՝ 48 ժամից ավել մեզ պետք չի: Բայց պիտի սեպտեմբերի 13-14-ը լինի՝ հաշվերաց տոնին, էդ շատ կարևոր ա, կամ նախընթացին կամ տոնի օրը հենց: Տոնի օրը մի քիչ կարա դժվար լինի, որ մարդիկ իրենց (մնացած խոսակցությունը լսելի չէ), քանի որ սրիկաները հանել են երկուշաբթին, մարդիկ կիրակի օրով են գնում արդեն իրենց ննջեցյալներին: Մեր մոտ՝ Արարատյան դաշտավայրում, շատ մեծ ա, Սյունիքներում՝ բաներում չգիտեմ, բայց Արարատյան դաշտավայրում՝ Երևանից բռնած էջմիածինով բանով, սաղ Արարատյան դաշտավայրով Արտաշատախառը էդ օրը ամենամեծ օրերից մեկն է էդտեղ: Հորովիլներ են անում, բաներ են անում և այլն, ննջեցյալներին այցելությունը: Հիմա ես մտածում եմ, որ չէ, ես աշխատելն եմ ուզում:

Ընթացքում, Տավուշում խնդիր ա, Մեղրիում, բան Սյունիքում խնդիր ա: Հետևից գնացող (մնացած խոսակցությունը լսելի չէ) էս արդեն լուրջ մեսիջ ա, որ գալիս ենք հետևիցդ, վերջ ախպեր, դու հեռանալու տեղ չունես: Էդ պահին, որ ստեղից գնան, ընդեղ Տավուշի կողմից էլ Լոռի-մոռի տղերքին պիտի ասենք՝ էն կողմից իջեք նայած որտեղ ա, Սևան ա՝ ուր ա, կարող ա ստեղ բունկերը մտնի պաշտպանության (մնացած խոսակցությունը լսելի չէ): Էդ ժամերի ընթացքում, երբ էս ամբողջը կարգավորված ա, վստահ գիտենք, որ մեր ձեռքերում ինչ ա, ամեն ինչ տեղի ա ունենում, ես հայտարարում եմ, ասում եմ՝ քեզ 2 ժամ ժամանակ եմ տալիս հանդիպման: Չեկար հանդիպման՝ ուրեմն մենք վերականգնում ենք սահմանադրական կարգը, ես հենց հիմա մտնելու եմ էս շենք: 2 ժամում դու չեկար՝ մտնում եմ էս շենք, վերջ, թող մտածի՝ ոնց ա շարժվում, ի՞նչ ոստիկանական ուժեր ա բերելու, որտե՞ղ ա բերելու:

Ի.Սաղաթեյան - Էդ ինչ որ ասում եք՝ դրա կազմակերպել ու Երևանում ունենալ:

Վ.Գալստանյան - 30.000 մարդ ա պետք, ավել էլ պետք չի, լուրջ եմ ասում: Դրա դիմաց իրենք ոչ մի բան չեն կարա անեն: Մանավանդ 30.000-ը տեղ եղան ու էն կողմերը ակտիվը կախած կանգնեցին, վերջ՝ գնալ չկա տղերք, էս 48 ժամվա խնդիր ա, լուծում ենք՝ պրծնենք:

Վ.Գալստանյան - Մինչև սեպտեմբերի 21-ը պիտի լուծենք էս հարցը: Ամսի 19-21-ն Արցախը հանձնվեց, ամսի 21-ին Հայաստանի Հանրապետության Անկախության տոնն է: Մենք պիտի 21-ին հարցը լուծած լինենք:

Ա.Սարգսյան - 19-ին անենք:

Վ.Գալստանյան - Կարևոր չի, 18-ին էլ կարանք, 19-ին էլ ուղղակի շաբաթ կիրակիի մասին եմ մտածում:

Ա.Սարգսյան - Սրբազան ջան, մի վայրկյան, եթե չեն բացում՝ բոյ ենք չէ՞ տալիս:

Վ.Գալստանյան - Միանշանակ, պիտի մտնենք:

Ա.Սարգսյան - Հա, պրծավ:

Այնուհետ.

Վ.Գալստանյան - Մեր ֆրակցիաներն էդ ժամանակ պիտի գան խորհրդարան: Մինչև էդ, աղաչում եմ քեզ, սաղի համարներն ունեցի, տների հասցեներն ունեցի: Իշխան, խնդրում եմ, էս գործը մի գցեք ականջի հետև: Մեռնեմ ջանիդ, համարները, նայի ինչ եմ ասում՝ համարները, հասցեները: Ուրեմն պիտի հրապարակվի սաղ: Առանց վախենալու, այ էս հասցեներն են, էս էլ համարներն են, ժողովուրդ: Իրենց գործածը պիտի իրենց (մնացած խոսակցությունը լսելի չէ): Էդ վախացնելու ա մինչև վերջ»:

➤ **2025 թվականի հունվարի 2-ին՝ ժամը 19:31-ին, Վազգեն Գալստանյանի բնակության վայրում գրուցել են վերջինս և Հովհաննես Ավետիսյանը.**

«(...)

Վ.Գալստանյան - Հիմա մի խոսքով, մենք էդ խմբերի հավաքագրման փուլում ենք:

Հ.Ավետիսյան - Բայց (մնացած խոսակցությունը լսելի չէ), լավ բայց չասեմ, որ դուք ուզենաք, էդ մարդկանց հետ չգիտեմ, պետք չի խոսել, ով ինչ անում ա, ոնց ա անում, ինչ ձև ա անում:

Վ.Գալստանյան - Հիմա դեռ հստակ թվանշաններն ենք հավաքում, երբ (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Հ.Ավետիսյան - Որովհետև եթե իրենք չիմանան՝ ինչի մեջ են մտնում, կարող ա ասած լինեն՝ հա, հետո գան (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան - Հավատացած եղիր, ղեկավարները գիտեն, իրենցից կախված, կգա ժամանակը, էդ ղեկավարներին մի հատ պիտի հավաքեմ, ոչ ամբողջին միասին, 2-2, 3-3 խոսենք՝ ինչ են անելու, ով ինչ հանձնարարություն ա ստանալու, էս անգամ մեթոդը պետք ա փոխվի, վերջ, հանրահավաք, հետո գործողություն չի:

Հ.Ավետիսյան - Հանրահավաքը հիմա ինքը պետք ա լինի արդյունքներն ամփոփելու և հանձնարարություններ տալու համար:

Վ.Գալստանյան - Հա, բայց պիտի լինի գործողություն ու ճնշում:

(...)

Վ.Գալստանյան - Իմ գրածը չկարդացիր:

Հ.Ավետիսյան - Ո՞րը, ո՞րը չեմ կարդացել:

Վ.Գալստանյան - Էլի, երկրորդ, երրորդ անգամ չեմ ասելու:

Հ.Ավետիսյան - Մարդկանց գիտակցությունը փոխելն ա դժվար:

Վ.Գալստանյան - Դժվար չի:

Հ.Ավետիսյան - Մենք մարդկանց, մարդիկ (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան - Մենք դրել ենք բանի վրա՝ համոզենք, քարոզենք, ինչը համոզել, քարոզել, 2 հոգու պատի տակ գյուլում ես, մի 15 հոգու էլ դնում ես բանտը, պրծավ, գնաց, սաղ քնաջնջվում են:

Հ.Ավետիսյան - Ես դրան լուսավորչական դիկտատուրա եմ ասում (ծիծաղում է):

Վ.Գալստանյան - Չէ, գնդակահարում ես ինչու, համարում ես, որ ինքը գործել ա դավաճանություն պետության դեմ, գնդակահարում ես, ընտանքին էլ կոմպենսացիա ես տալիս կյանքի համար, իրանք էլ ուրախ կլինեն:

(...)»:

➤ **2025 թվականի հունվար 31-ին՝ ժամը 21:46-ին, Վազգեն Գալստանյանի բնակության վայրում գրուցել են վերջինս, Արթուր Սարգսյանը, Իգոր Սարգսյանը և Հրայր Նազարյանը.**

«**Վ.Գալստանյան** – Հիմա մենք վերակազմավորման, կամ կազմավորման ընթացքի մեջ ենք: Նպատակ ենք դրել գոնե 150 մինիմում 200 խումբ կազմենք: 25 հոգանոց պտի (մնացած խոսակցությունը լսելի չէ) լինի: Էս տղերքը որ կան (մնացած խոսակցությունը լսելի չէ): Մի խոսքով հիմա պլանը դա է: Բոլոր տեղերից Երևան քաղաքում ներառյալ 25 հոգանոց, 20 հոգանոց թիմեր կազմել, վստահ են մարդիկ, որոնք կանգնելու են ու վերջ: Մի օր ա, երկու օր ա ինչքան որ պետք ա: Նու էս փուլի մեջ ենք: Անցյալ օրը Տիգրանը Եռաբլուրում որ ինձ տեսավ, մոտեցավ շատ ամուր, որ (մնացած խոսակցությունը լսելի չէ), շատ ոգևորված էր, աշխատանքներ ենք անում, էս ենք անում, էն ենք անում, ինչ որ մարդկանց մասին էր ասում, ասի՝ կխոսանք: Մինչ այդ խոսել ենք արդեն: Մենք ուզում ենք մինչև փետրվարի 20–ը առաջին նախնական փուլով ամփոփենք թե ինչ ունենք՝ հստակ թվերով, մարդկանցով: Եթե բավարարում ա անցնենք առաջ: Եթե չէ գոնե մի 10-15 օր էլ

ավելացնենք իմ հաշվարկին: Ամիս, ամիս ու կես ժամանակ ունենք, (մնացած խոսակցությունը լսելի չէ) ժամանակ չունենք: Հետո.

(...)

Հ.Նազարյան – Մենք նախատեսում ենք, որ մի հատ հանդիպում ընդեղ ըլնեն: Եռաբլուրում մի հատ (մնացած խոսակցությունը լսելի չէ) եկել էր, ասում էր՝ մի հատ բան իրանց մոտ պրոցես սկսենք, ցույց-մույց անեն, ժողովուրդ հավաքվի: Էդ ժողովուրդը ջոկում ես ոչ մի բանի համար ա: Ձեզ էլ կվառեն կքաշեն (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Ո՞րտեղ:

Հ.Նազարյան – Եղեգնաձորում էլի բան անեն կազմակերպեն:

Վ.Գալստանյան – Չեն կարա:

Հ.Նազարյան – Սենց Ջերմուկից վաքշե մարդ չի եղել, Եղեգնաձորից էլ էդ մի քանի հոգին են եղել: Ռեալ հիսուն հոգանոց խումբ եղել ա իմ հետ: Գնացինք, հասանք նրան, որ մարզպետը՝ ԿԳԲ-ի պետով ու վարչության պետով ընդեղ ոչ մի ձևով չեն կարում (չի ավարտել): Էդքան հարկային գալով-գնալով, չգիտեմ ինչ ասես մարդ ճամփելով էս անելով չի ըլնում: Խնդիր են դրել, այսինքն՝ մարզպետարանում ժողով են անում, որ Հրայրին մեկուսացնենք: Այսինքն՝ իմ կողմի մարդկանց առանձին կանչեցին, մեկի տղեն չգիտեմ՝ որտեղ քննիչ ա, հերն ու ախպերներն էլ բանակից են, մեկին՝ չգիտեմ դպրոցի աշխատող ա, էսի հաշվապահ ա, իրանց հետ կապված (մնացած խոսակցությունը լսելի չէ): Այ սենց մաս-մաս մասնատեցին, մասնատեցին, որ էնքան որ ցույցի դուրս չգան: Ու սկսեցին էդ 50 հոգուց մի երկուսին տարան մեկը՝ երկու ամսով կալանավորվեց, մեկը՝ մի ամսով կալանավորվեցին: Ըտենց:

Ի.Սարգսյան – Սրանք ասում են՝ ցույցի բանի շատ մարդ կլնի: Կոնկրետ նորմալ մարդիկ (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Ա.Սարգսյան – (մնացած խոսակցությունը լսելի չէ) Պրոստը Էդ ցույցի (...) (մնացած խոսակցությունը լսելի չէ): Մարդ ըլնելու ա: Չէ մեզ գործողության մարդ ա պետք: Հստակ որ իմանանք էդ 10 հոգին ա, էդ 10 հոգու վրով (չի ավարտել):

Հ.Նազարյան – Դե որ ցույցի մարդ լինի, 10 հոգին արդեն կլնի ու կլնի:

Ի.Սարգսյան – Չէ, դե նախօրոք:

Ա.Սարգսյան – Ձէ, 10 հոգին պտի լինի, որ էդ 10 հոգին ցույցի էներգետիկան ապահովի ախպերս: Էս անգամ էլի (մնացած խոսակցությունը լսելի չէ): Կիրանցից ո՞նց եկանք: Հիմա մարդը պտի տենա մի բան կա, որ դուրս գա փողոց: Կազմակերպելը հենց նենց չի ըլնում: Որ կազմակերպված խմբերը լինեն (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Հ.Նազարյան – Ուրեմն պտի ցուցակը դրվի նայվի էլի, ով ա ում հետ, ռեալ ա թե չէ:

Ի.Սարգսյան – Ասենք Հրայր ջան պատկերացնում ես 30 տեղ ինչ որ գործողություն անել: Կամ 20 տեղ պայմանական (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Ի՞նչ 20 տեղ, ի՞նչ 30 տեղ:

Ի.Սարգսյան – Պայմանական եմ ասում ես:

Վ.Գալստանյան – Երբ որ ասում եմ 150 խումբ, ուրեմն 150 տեղ ա:

Ի.Սարգսյան – Հիմա եթե 150 խումբ չկարողացանք մենք:

Վ.Գալստանյան – Պտի անենք:

Ի.Սարգսյան – Ոչ մեկ չեն էլ բան անում: Պտի անենք հա բան չունեմ ասելու: Բայց ռեսուրսը պտի ըլնի:

Վ.Գալստանյան – Դե դրա համար ենք ասում, որ պտի անենք, պտի հավաքենք:

Ի.Սարգսյան – Երբ որ տեղն իմանան մարդիկ գան, տարբեր տեղերից շուխուր անեն բավական ա ասենք: Հաշվարկած ասենք իրանց ռեսուրսների վրա աշխատվի, իրանց ռեսուրսը՝ էս կարմիր բերետներ, հիմնականում սև բերետներ, եսիմ ինչ (մնացած խոսակցությունը լսելի չէ) իրանք:

Վ.Գալստանյան – 4500 հոգի են:

Ի.Սարգսյան – Սենց որ պտի միանգամից ասես հինգ հազար (չի ավարտել), հարյուր (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Բոլորն իրար հետ:

Ի.Սարգսյան – Կանգնում ա:

Հ.Նազարյան – Պարեկների հետ, թե՞ պարեկները դրա մեջ չեն:

Վ.Գալստանյան – Ձէ պարեկները չեն: Ներքին զորքերն են:

Ի.Սարգսյան – Դրանք չեն կարա 30 տեղ ճղվեն: 30 հոգին՝ 1300 մարդ պտի ունենան չէ մեր հետևից: Եվ եթե դրանք կիսվեն էլ ամեն տեղ ինչ որ մի բան, ոչ մի բան չեն կարա անեն, կջղայնանան կգնան այն կողմ: Իրանց հիմնական բանն էլ էդ ա՝ ուժը, հիմա ներսից, դրսից ոնց կարողանան գան սենց ֆռան, խոսեն, որ ոնց չեն կարողանում: Եթե սենց բան

անենք արդեն մենք հանրահավաքին շատ ավելի շատ ժողովուրդ կգան տարբեր տեղերից միանգամից բան (մնացած խոսակցությունը լսելի չէ): Վախենում են մարդիկ:

Ի.Սարգսյանը նշել է, որ ղարաբաղցիները իրենց 50 հազարի համար են վախենում, իսկ մյուսները՝ տան անդամների: Հ.Նազարյանն ավելացրել է, որ մի քանի հոգու վրա էլ քրեական գործեր կան: Դուրս չեն գա, քանի որ հնարավոր է, որ դատեն: Վ.Գալստանյանի այն հարցին թե կդատե՞ն, Հ.Նազարյանը պատասխանել է, որ ոչ թե կդատեն, այլ կծերբակալեն: Վ.Գալստանյանը հիշել է Մամիկոնին, որին դատել են:

(...)

Ի.Սարգսյանն ասել է, որ ասել է ինչ-որ տեղ, որ ղարաբաղցիներով հավաքվեք և որ մի կռված տղա պատասխանել է, որ իր ընտանիքի հացի հարցը եթե լուծեն կհավաքվեն: Վերջինս գտնում է, որ այդպիսի մարդկանց «հացի հարց» չպետք է հետաքրքրի: Ա.Սարգսյանը հակադարձել է **Ի.Սարգսյանին**, որ նման բան չի կարող լինել:

Հետո.

Ի.Սարգսյան – Ստեղ մի հատ բան կա, ա՛յ ցավդ տանեմ. մի անգամ կանգնելու բան կա:

Ա.Սարգսյան – Դե տենց չի էլի ցավդ տանեմ:

Ի.Սարգսյան – Դե եթե չի ըլնի, ուրեմն չի՞ ըլնի: Էդ մարդուց ասում եմ՝ ես չեի սպասում, որ տենց բան կասի:

Հետո Հ.Նազարյանը հայտնել է, որ Վայքում փորձել են հանդիպել, սակայն ղարաբաղցիներից ընդամենը հինգ հոգի էին ներկա: Այդ պահին ներս է մտել Մովսես Շարբաթյանը և ասել.

Մ.Շարբաթյան – Մարտինը վաղը կբերի:

Ի.Սարգսյան – Մարտինը վաղը կկարանա՞:

Մ.Շարբաթյան – Չէ, ասեց գալու համար չէ, ասեց՝ կզանգեմ ես գործից հետո:

Վ.Գալստանյան – Մարտինը ի՞նչ էր ասում բա:

Մ.Շարբաթյան – Ասում ա՝ 2-րդ, 4-րդ, 6-րդ, մեկ էլ 7-րդ: Բայց չորս տղա նորմալ ա:

Վ.Գալստանյան – Նորմալ ի՞նչ ա նշանակում:

Մ.Շարբաթյան – Որ խոսացել ա տարբեր մարդկանց հետ, ոնց ասել ես տենց էլ անում ա, ինչ-որ ցուցակ կբերի:

Վ.Գալստանյան – Էն ձեր գյուղերինը ի՞նչ են:

Մ.Շարբաթյան – Գյուղերինը՝ մի հոգու հորքուրիս տղան դրան տեսել ա, մի հոգու հետ էլ կիրակի օրն առավոտը պետք ա հանդիպեն Գրիբոյեդովում:

Վ.Գալստանյան – Իսկ, ապեր, Հովհաննեսն ո՞վ էր:

Մ.Շարբաթյան – (Փորձել է վերհիշել):

Ի.Սարգսյան – Կարո՞ղ ա էն Արշակի հերն ա:

Ա.Սարգսյան – Արշակն ո՞վ ա:

Ի.Սարգսյան – Էն (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Ա.Սարգսյան – (Ճպացրել է՝ որպես բացասական նշան):

Ի.Սարգսյան – Ի՞նչ եղավ նա:

Վ.Գալստանյան – Չէ եկել են անցյալ օրը:

Հետո.

Հ.Նազարյան – Սարգսյան, անտեր, անգործ մի որոշ տոկոս, որոնք ունենան էդ հացի ու ծախսի հարցը ո՞նց, դա է հետաքրքրում: Մեծ մաս ա:

Ա.Սարգսյան – Էսօր տենց մարդ չկա, ես քեզ անկեղծ ասեմ:

Ա.Սարգսյանը պատմել է, որ այսօր Սիսիանում բանվոր չես կարողանում գտնել, բոլորն աշխատում են: Օրինակ է բերում ԽՍՀՄ-ի ժամանակները, որ նույնիսկ այն ժամանակ այսքան շինարարություն չի եղել: Հիմա Սիսիանում ութ հատ դպրոց են կառուցում, որոնցից՝ չորսի գետնահարկը պետք է լինի «բունկեր»: Ըստ Ա.Սարգսյանի, այսօր Սիսիանում կատարվում է 50 միլիարդի շինարարություն:

Հետո.

Հ.Նազարյան – Այսի՞նքն (մնացած խոսակցությունը լսելի չէ) շահագրգռես, որ տենց բաներ չունեն:

Ի.Սարգսյանը նշել է, որ ինքը զարմացած է եղել այդ «կոված տղայի» արված արտահայտությունից: Վ.Գալստանյանը հարցրել է Չախալյան Վահագից, նշել, որ չեկավ, քանի որ խոսալու բան ունի:

Հետո.

Վ.Գալստանյան – Ես կարծում եմ, որ կհասցնենք: Եթե 150 խումբ էլ չհասցնենք, 100 խումբ մենք կհասցնենք՝ առանց դաշնակցության, առանց արցախցիների, առանց մի քանի ավել ուժերի: Էդ արդեն 2500 հոգի է անում: Դաշնակցությունը Իշխանն ասում ա՝ 1000

հոգի մարդ ունեն: Կարան ձգեն մինչև 1200: Եթե մեր ասած տրամաբանությամբ գնա 1200–ը 60 խումբ ա անում: Մի քիչ-քիչ հիսուն, հա էլի վաթսուն համարյա: Էդ թվերը եթե ռեալ ըլնի (մնացած խոսակցությունը լսելի չէ): Դե պտի էս էլ ձգենք առանց կուսակցությունների, առանց բաների 100 խումբը հասցնենք: Հիմա ասենք մեր տղեն նախնական մի տաս խումբ պատրաստում են, մեր էս Արմանը: Ինքն ասում ա՛ երկրորդ էջելոնի մարդիկ շատ կան, բայց մեզ խումբ-խումբ ա պետք: Կպնենք, էս գոնե 100 խումբը դասավորենք, մնացածն արդեն կտեսնեն՝ մյուսներն ինչ վիճակում են: Ու վսյո: Աստծով: Ինձ թվում ա կարանք ձգենք: Մի քիչ էլ հետո գումար–մումարի հարցն էլ լուծվի, մի քիչ էլ տենց կհեղնեն:

Վ.Գալստանյան – Էն բոյովի անունը ի՞նչ էր՝ էն օրվա տղեն մեր:

Մ.Շարբաթյան – Ինքն էլ վիրահատվել ա, պտի ցուցակը բերի: Դավիթ ա անունը Աշտարակ ա: Արթուր Մակարյանը Ապարանն ա:

Վ.Գալստանյան – Մի հատ գրիչը տուր էլի: Այ սենց հերթով պատասխանատուների անունները գրի: Պատասխանատու է, ով որ եկել ա գրում եմ:

Հ.Շահնազարյան – Շահնազարյան Հայկը 10 հոգի ա ասում:

Վ.Գալստանյան – Եղավ 20°: Երեկ տաս չէ՞ր:

Հ.Շահնազարյան – Երեկ չէր, է, երեք ամիս առաջ էր:

Վ.Գալստանյան – Երեկ եմ հարցրել:

Հ.Շահնազարյան – Չէ, Սրբազա՛ն ջան դու ինձանից չես հասցրել:

Վ.Գալստանյան – Երեկ չէ առաջին օրը:

Հ.Շահնազարյան – Քսան: Ու ընդ որում ասի՝ երկուսն էլ աղջիկ: Հիշեցի՞ք:

Վ.Գալստանյան – Հա հիշեցի: Քսան, ավելի լավ: Դավիթը ի՞նչ էր՝ Աշտարա՞կ:

Մ.Շարբաթյան – Աշտարակ:

Վ.Գալստանյան – Մեր գյուղերն ո՞վքեր էին: Ասիր Գրիբայեդով (չի ավարտել):

Մ.Շարբաթյան – Արմեն, մեկ էլ (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Ստեղ Արսենի անունն էլ գրեմ: Արմեն ի՞նչ, Գրիբայեդով՝ վ:

Մ.Շարբաթյան – Հա»:

➤ **2025 թվականի փետրվարի 18-ին՝ ժամը 18:34-ին**, Վազգեն Գալստանյանի բնակության հասցեում գրուցել են վերջինս, Մովսես Շարբաթյանը, Իգոր Սարգսյանը և 3 տղամարդ (ոմն Եգոր, Հակոբ, Սամվել)։

«(...)

Տղամարդ – Միաժամանակ:

Վ.Գալստանյան – Հա, սաղ միևնույն ժամանակ պիտի լինի: Տրոլեյբուս–մրոլեյբուս (մնացած խոսակցությունը լսելի չէ) սալյուտները կա չէ՞:

Տղամարդ – Հա:

Վ.Գալստանյան – Մի քսան հատ, երեսուն հատ (մնացած խոսակցությունը լսելի չէ) Սենց բաներ: **Ինտերնետի մայրերը հանեն, փչացնեն: Ընդհանրապես հոսանք չլինի. հոսանքազրկել (մնացած խոսակցությունը լսելի չէ) սիստեմը խախտվի:**

Տղամարդ – Կաթվածահար լինի, էլի:

Վ.Գալստանյան – (մնացած խոսակցությունը լսելի չէ) էֆեկտ լինի: **Որովհետև հոսանքը (մնացած խոսակցությունը լսելի չէ), բանկերը, մեծ խանութները սաղ կանգնելու են, չեն աշխատելու:**

Տղամարդ – Հա, ուզենան չեն կարա (մնացած խոսակցությունը լսելի չէ): Բայց էդ ե՞րբ պիտի լինի:

Վ.Գալստանյան – Երբին:

Տղամարդ – Չէ (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Երբ որ կասեմ, դու դուրս կգաս փողոց՝ էս ինչ օրը, էս ինչ ժամին (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան – Չէ, էդ գործողությունները էդ ժամին պիտի տեղի ունենա (մնացած խոսակցությունը լսելի չէ) էսօր ասեցինք էսօր 18–ն ա, չէ՞, ասեցի. «Ժողովուրդ ջան, ամսի 19–ին, այսինքն՝ վաղը», մի օր առաջ եմ ասելու. «ամսի 19–ին, ժամը 4–ին բոլորս հավաքվում ենք, ենթադրենք, էս ինչ փողոցի էս ինչ անկյունում» ու լա–լա–լա–լա: Հաջորդ օրը, ժամը 19–ին ժամը 4–ին արդեն գիտեն, որ իրենք, խոսքի, Բաղրամյանի տրոլեյբուսի գծերը ցած են բերում, վերջ: Էն մեկը գիտի, որ: Իգորը գիտի, որ Նորագավիթի ճամպեն՝ վերջ, խցանվում ա, ու սենց:

Վ.Գալստանյան – **Չէ, ասենք, մեքենայով մի հար՝ Ձիլով, փալիս ես սփռլբին՝ հինգ փեղանոց, ասենք, Բաղրամյանի վրայինը՝ Բարեկամության մեփրոյի մոտ, մի հար գծերի սփռլբին ես փալիս շուռ, սենց թեքվում ա, սաղ գծերը գալիս են ցած:**

Վ.Գալստանյան – Չի՞ լինի տենց:

Տղամարդ – Կլինի:

Վ.Գալստանյան – (մնացած խոսակցությունը լսելի չէ) համ ԱՊՊԱ ես սարքում, համ:

Տղամարդ – Սաղ տղերքը մնում ա դուրս գան:

Ի.Սարգսյան – Դուրս կգան, դուրս կգան:

Վ.Գալստանյան – Մինչև ժողովրդի դուրս գալը, հիմա մենք էս պահին, եթե ոչ մի բան չի խանգարում մեզ, 52 խմբապետ ունենք: Այսինքն՝ դա ենթադրում ա:

Տղամարդ – Երկու հարյուր հոգի պիտի լինե՞ր:

Վ.Գալստանյան – Չէ, երկու հարյուր խումբ պիտի լինեն, բայց հիմա դա ենթադրում ա մի 70 խումբ: Էսօր մի հատ էլ մարդ ա եկել՝ Գոռը մեր էջմիածնից, ինքը երիտասարդ տղա: Գոռի հայրիկը նստած ա: Արմանն էր, որ, կիիշեք, Մոսկվայում ադրբեջանցի էր սպանել:

(...)

Վ.Գալստանյան – Իրանց հետ կգբաղվեմ, կխոսամ: Իրանց հետ կխոսամ. մեր Արթուրը կխոսա: **Ես մի քիչ վախենում եմ ինֆորմացիայի դուրս գալուց:** Խոսում ես, չգիտես ով են, ինչ են (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Տղամարդ – Իսկ քիզնեսմենները՞:

Վ.Գալստանյան – (մնացած խոսակցությունը լսելի չէ) ամբողջ Միհրանենց խումբն ա: Մի հարյուր հոգանոց ժողովուրդ են՝ զուտ գործողության համար: Եթե նենց լինի, գործի տեղից էլ լիքը մարդ կա:

Տղամարդ – Բիզնեսմենները, սրբազան, Տաշիր Սամոն չկա՞:

Վ.Գալստանյան – Հլը որ չէ, բայց կմիանա:

Տղամարդ – 18-ին միացել էին է, դրա համար, բայց մինչև էսօր ինչքան շարժում եղել ա ոչ մի անգամ չի եղել, որ (մնացած խոսակցությունը լսելի չէ), հատ ու կենտ մարդիկ:

Վ.Գալստանյան – Մեր անելիքից կախված. բոլորը վազելով կգան:

(...):»:

2. Գաղտնի քննչական գործողությունների արդյունքով ձեռք բերված տեղեկություններով, որոնց համաձայն՝

➤ 2025 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 01:45-ին, Վազգեն Գալստանյանի բնակության հասցեում գրուցել են վերջինս և Իգոր Սարգսյանը.

«Վ.Գալստանյան - Ի՞նչ եղավ, նորություն ունենք:

Ի.Սարգսյան - Չէ:

Վ.Գալստանյան - Չէ, էդ մեր խմբերից:

Ի.Սարգսյան - Չէ, սրբազան ջան, նույն ձև:

Վ.Գալստանյան - Արցախցիներից ի՞նչ նորություն կա էդ խմբերի իմաստով:

Ի.Սարգսյան - Արցախցիներն էլ ասել են՝ լավ ա, ինչն ա լավ՝ չգիտեմ, բայց (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան - Խմբերի առումով եմ, էլի, հարցնում:

Ի.Սարգսյան - Հա հասկացա»:

➤ **2025 թվականի ապրիլի 3-ին՝ ժամը 11:28-ին**, Վազգեն Գալստանյանի բնակության հասցեում գրուցել են Հրայր Հակոբյանը և Իգոր Սարգսյանը.

«**Հ.Հակոբյան** - Իգոր, եթե Նիկոլին սպանեմ, ինձ ի՞նչ դրանից:

Ի.Սարգսյան - Ցմահ կտան, եթե ողջ մնաս:

Հ.Հակոբյան - Իսկ եթե Նիկոլին, Արարատին, Ալենին մի տեղում վերացնեն, իրանցից էլ իշխանության մարդ չի գա, չէ՞: Իշխանությունը կփոխվի ու իմ հետ ոչ մի բան չի փնի: Շնորհակալություն (մնացած խոսակցությունը լսելի չէ) համար: Էդ երեքին մի տեղ քոնցնենք:

Ի.Սարգսյան - Չգիտեմ»:

➤ **2025 թվականի ապրիլի 5-ին՝ ժամը 01:32-ին**, Վազգեն Գալստանյանի բնակության հասցեում գրուցել են վերջինս, Մովսես Շարբաթյանը, Իգոր Սարգսյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Արթուր Սարգսյանը, Կարո Օկումուշյանը և Տիգրան Թովալյանը.

«(...)

Վ.Գալստանյան - Հիմա մեզ մնում ա ստրատեգիայի հարցը:

Ի.Սարգսյան - Հիմա մի հատ տեսնենք, հասկանանք՝ ինչ ա, քանի հոգի կարաքերի, կարող ա նենց ստացվի, որ ընդեղ էլի տղերք կան, Կոլյան էլ կարա վարդենիսցիքին բան անի:

Վ.Գալստանյան - Էս Փարաքարի տղերքն էլ Աբրահամը, բանը, էլի Մոսոն իրենց հետ կապել ա:

Ի.Սարգսյան - Տղերքից ընդեղ մարդ կար, էն որ եկել էին հանդիպեցին, Աշոտենք, որ բերել էին, ասեց՝ Հրազդան 2-3 խումբ (մնացած խոսակցությունը լսելի չէ) Արովյանում կա, 3-րդ խումբը (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Վ.Գալստանյան - Բերելու հարց պիտի լինի:

Ի.Սարգսյան - Բերելու հարցերն ա, էլի, միջոցների, բաների հարց կլինի, քիչ չի: Ես մեր Արտակին Սպիտակի հարցրի, ասեց՝ 40 հոգի կան, ավելի կարան լինեն, տենց միջոցների, բաների հարցը չեմ կարողանում կարգավորեմ:

Ա.Սարգսյան - Սրբազան ջան, ես առաջարկում եմ 2 օր նշանակենք կես ժամանոց հանդիպումներ, կես ժամը հերիք ա, կես ժամ (մնացած խոսակցությունը լսելի չէ) երկար չէ, Արտակն ասում ա՝ 40 հոգի, օրինակ, զանգում ես Արտակին ասում ես՝ ընկեր, 40 հոգին պիտի հանդիպենք, օրինակ երեքշաբթի օրը ժամը 2-ին:

Վ.Գալստանյան - Ստե՛ղ:

Ա.Սարգսյան - Այո:

Վ.Գալստանյան - Բա ստեղ, ո՞նց:

Ա.Սարգսյան - Ախպեր, ասում եմ, էլի, 6 ամիս ա գալիս, գնում են, ոչ մեկ չի ասել, մեկն ասե՛լ ա՝ ավտոյի խնդիր ունեմ: Չի ասել:

Ի.Սարգսյան - Ասել են, ես ձեն չեմ հանել:

Ա.Սարգսյան - Չէ, դե հիմա, Իգո՛ր ջան, ձեն հանելով չի, հիմա վաղը, պատկերացրու, առավոտը ուզում ենք հեղնենք, զանգում ենք, ասում են՝ ավտո չկա:

Վ.Գալստանյան - Մոտ, էդ սարի թաղցիք (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Ա.Սարգսյան - Արտակը գալիս ա, ախպեր, ասում ենք՝ ախպեր, ով ավտոներ ունի, գազը կտանք, կազմակերպի արի:

Մ.Շարբաթյան - Վաղը (մնացած խոսակցությունը լսելի չէ) կանչել եմ, կիրակի օրը:

Ա.Սարգսյան - Կարում ես կազմակերպես, ասում ա՝ հա, եթե ասում ա՝ ավտո չունեմ, ասում ենք մի հատ գազել վերցրու, արի, գալիս ա, էդ 40 հոգու հետ հանդիպում ենք, տեսնում ենք՝ 40 ա, թե 19, 40 ա, ճշտում ենք՝ 2 ավտո ունեն, 4 ավտոյի հարց լուծում ենք, գրում ենք՝ Արտակ Սպիտակ 4 ավտո ու մտածում ենք՝ ավտոյի հարցը ոնց ենք լուծում: **Իրեն ասում ենք՝ տաքսի ճարի, փողը տալու ենք,** դու գալու ես, թե (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Ի.Սարգսյան - Իսկ ավելի ճիշտ չի լինի՝ էդ 40 հոգին չբերենք ստեղ, 1-2 հոգի գնա ընդեղ տեսնի:

Ա.Սարգսյան - Դե, ցավդ տանեմ, էդ գնալով օրը պրծնելու ա, թող մի հատ գան, ընդեղ գալն ուրիշ ա, ընդեղ գալն ուրիշ ա, ստեղ գալը լրիվ ուրիշ ա, ախպերս: Մարդ կարա իրենց գյուղում գա հանդիպի, ստեղ չի գա:

Ի.Սարգսյան - Դե հիմա մարդ կա, կարող ա, ասենք, գործեր, բան ունի:

Ա.Սարգսյան - Դե էդ օրն ա գործ ունեցավ, Իգոր ջան:

Ի.Սարգսյան - Դե էդ օրը գործը կթողնի:

Ա.Սարգսյան - Վաղը բարենպաստ ա, ուրբաթ ա, մյուս օրը շաբաթ ա, ոչ մեկ չի մտածելու գործի գնալ, պրոստո առավոտը շուտ ա պետք կոչ անել մարդիկ չթողեն էթան դաչա, Ծաղկածոր: Մի շաբաթ ա ասում եմ իմաստ չկա բան անելու, բայց էս ֆոնի վրա կարելի ա մի բան անել, առավոտվա համաձայն, իրիկունը կարաս, համաձայն եմ, շարունակությունը ես չեմ տենում, կարող ա սխալվում եմ, բայց ով որ պատկերացնում ա ժողովուրդը թափելու ա, ես չեմ պատկերացնում, բայց մենք կարանք, հիմա կոչը անում ես, ասում ես՝ էս դավաճանին չափտի թողենք մտնի երկիր: Եթե էթանք աէրոպորտ, 20.000 մարդ լինի, կարելի ա դաչա գնալ, բայց եթե լինի 5000 լինի, իմաստ չունի դաչա գնալ: Ես էդ եմ ասում, եթե էթանք աէրոպորտ, 20.000 մարդ լինի, էդ վախտ կարելի ա էթալ դաչա, էս ա իմ ասածը: Ես էս բանին մի բան անելը, որ կարա բերի, օրինակն եմ ասում, վիդեոները դրել նայել եմ, Սամոն միլիոն մարդու լավություն ա արել, շրջապատի համար: Լիքը մարդ փողոց փակելու չի եկել, բայց էդ (մնացած խոսակցությունը լսելի չէ) եկել ա:

Վ.Գալստանյանը նշում է, որ կեսօրին մոտ 5000 մարդ է եղել Սամվելի տան մոտ, ինչին ի պատասխան Ա.Իսրայելյանը նշում է, որ իրենք հիմա մարդ են հավաքում: Ա.Սարգսյանն էլ պատմում է, որ ստուգումներ են սկսել բոլոր հիմնարկներում, հավելելով, որ իր ընկեր Սուրոն, ով նախկինում իր խաթր մասնակցել է կոչերին, հիմա ձեռնպահ է մնում՝ վախենալով իր բիզնեսների կորստից: Ա.Սարգսյանն առաջարկում է վայրէջքի ժամը ճշտել և հավաքվել օդանավայանում, մեծ բազմություն հավաքվելու դեպքում՝ քայլել դեպի ամառանոց, «էլ չենք էթում դաչա, կանգնում կոչեր անում, էթում ենք բոյ ենք տալիս, էդ բոյի վախտ հավատում եմ, որ ժողովուրդը տենան ծեծում են մեզ (մնացած խոսակցությունը լսելի չէ) բայց 20.000-ով կարաս բոյ տաս, 2,3,4, 5000-ով չես կարա, 20.000-ով, էսօրվա մեր կամանդը, որ կանգնի առաջին գիծ, մենք, կարաս բոյ տաս, կարան միլիցեքը հետ քաշվեն»:

Ա.Սարգսյանն հավելում է, որ Նիկոլ Փաշինյանը մարդկանց բազմությունը տեսնելու դեպքում այլ ճանապարհով կգնա:

Վ.Գալստանյան - Էն մեր պլանը ինչ որ կա, իրականացնենք, դնում ենք, նախապես խոսում ենք բոլոր խմբերին, ճշտում ենք լրիվ ժամերը, ու երկրորդ մեկ, կամ մեր պատկերացրածները ալիք ենք ստեղծում: Ո՞րն ա ալիքը: Ասենք ժամը մեկին երկուսիցս մտնում եմ եթեր, ասում եմ՝ ժողովուրդ, մեր ունեցած տեղեկություններով, այ սենց բաներ են անելու, դրանք ամբողջական մեզ հասած տեղեկություններն են և դրանք հավաստի են նաև էն իմաստով, որ էս մարդը ոչ մի բան չի հրապարակում, թե ինչ օրակարգով ա գնալու: Հետևաբար հենց հիմա կոչ եմ անում, որպեսզի յուրաքանչյուրդ ձեր կերպով, ձեր ձևով, որտեղ որ կաք, ինչպես որ կաք, խաղաղ անհնազանդության կոչ եմ անում, բոլորդ ով որտեղ կարող եք, կանգնեք, իր բողոքը հայտնի: Ու էդ ժամանակ նախապես խոսում ենք, ու ժամը չորսին ինչ-որ բան են փակում, ժամը չորս անց կես մեր ասած տեղում էս ինչ տեղում էս ինչ բանը, ժամը հինգին էս ինչ բանը: Էն ինչ որ գծել ենք: Տենց ալիք ա դառնում երկրորդ մեկ, որ ինչ-որ բան ա դառնում ու ժամը վեցի կողմերը էդ ալիքի վրա հելնում եմ ասում եմ՝ հիմա գնում ենք օդանավակայան էս մարդուն չթողենք երկիր:

Ա.Սարգսյան - Երկուսին պիտի անես:

Վ.Գալստանյան - Չէ, ալիքը ստեղծելուց հետո: Առաջին կոչը լինում ա դուրս եկեք արեք, ու էդ տեղի ա ունենում, թող լինի կեսին, էն կեսն էլ որ պլանը որ գործում ա, մի հատ էլ ըտեղ ասում ա ժամը իննին երևի հավաքվում ենք օդանավակայան:

Ա.Սարգսյան - Նախագահականի մոտ:

Վ.Գալստանյան - Կարգոյի կողմից դուրս կգա:

Ա.Սարգսյան - Միանշանակ, ինքը փախչելու ա:

Հռահնազարյանը համոզմունք է հայտնում, որ ճանապարհը փակելու դեպքում էլ Փաշինյանը մեկ այլ ճանապարհով կգնա:

Վ.Գալստանյանի առաջարկին՝ վերոնշյալ իր նախաձեռնության հետ կապված, բոլորը համաձայնում են, ինչից հետո նա հանձնարարում է վաղը առավոտյան 10:00-ին կանչել Հովհաննեսին և Իշխանին, ինչպես նաև որոշում կայացնելու դեպքում լուր տալ հանձնախմբի տղաներին: Վ.Գալստանյանը հանձնարարում է առավոտյան 12:00-ին կամ 13:00-ին ժողովի կանչել տղաներին: Վ.Գալստանյանը առաջարկում է վերջնական որոշել կոչ անելու և մնացած գործողության ժամերը, հավելելով, որ առաջին գործողությունները

պետք է սկսել Տավուշում: Ա.Սարգսյանն առաջարկում է, որ կոչի շեշտադրությունը դնել եկեղեցու վրա, ինչին Վ.Գալստանյանը նշում է, որ երկու անգամ է կոչ անելու, առաջինը՝ խաղաղ անհնազանդության, երկրորդը՝ օդանավակայան գնալու մասին:

Վ.Գալստանյան - ժամը 15:00 կոչ, սկսում ա 15:15 Տավուշը, 15:30՝ որ կողմը:

Ի.Սարգսյան - Բերեք հինգին ստեղ դնենք, Տավուշը՝ չորսին:

Հ.Շահնազարյան - Կոչից գործողություն 15-20 րոպե առավելագույնը:

Վ.Գալստանյան - Աէրոպորտն էլ կասեմ, որ ով որ չի կարում ցերեկվա ժամին հասնի ընդեղ, մեր խմբերը իրանց գործերն անեն, էն մնացածը իրիկունը գան ընդեղ: Կլինի՞ տենց:

Ա.Սարգսյան - ժամը չորսին:

Վ.Գալստանյան - Երեքին եմ գրել:

Ա.Սարգսյան - Երեքին կոչը անում ես, ասում ես՝ որ տեղեկություն ունենք, որ թուղթ ա ստորագրելու, ժողովուրդ ջան, ես կոչ եմ անում, հայ ժողովուրդ, տենում եք ինչ ա կատարվում, այ մեծահարուստներ, այ ձեր ցավը տանեմ, հիմա դուրս ենք գալիս, մեր անհնազանդությունը կատարում ենք փողոցում, ժամը իննին էլ հավաքվում ենք աէրոպորտում, չենք թողում, որ նա մոտիկանա:

Ի.Սարգսյանը առաջարկում է երկար ժամանակ չթողնել կոչի ու գործողության միջև, ինչին Վ.Գալստանյանը նշում է, որ ժամը 15:30 Տավուշում անհնազանդության գործողություն կանեն, 16:00-ին՝ Թալին, 16:30՝ Աշտարակ, 17:00՝ Արովյան, 18:00՝ Նորագավիթ ու Փարաքար:

Վ.Գալստանյանը հանձնարարում է Մ.Շարբաթյանին առավոտյան 08:00-09:00 ժամանակահատվածում լինել օդանավայանում և հավաստիանալ Փաշինյանի մեկնելու լուրի մասին: Վ.Գալստանյանն առաջարկում է «Որդիների կանչին» ևս իրազեկել վերոնշյալի մասին: Վ.Գալստանյանը ծայնային հաղորդագրություններ է ուղարկում Հովհաննեսին, Գևորգին, Արսենին և ևս մեկ հոգու (անունը չի լսվում), խնդրում վաղը ժամը 13:00-ին գալ իր մոտ: Վ.Գալստանյանը Կարենին ծայնային հաղորդագրություն է ուղարկում և խնդրում ժամը 14:30 գալ իր մոտ և բերել բոլոր նրանց, ովքեր կկարողանան գալ: Վ.Գալստանյանը հանձնարարում է նկարողներին կանչել նկարելու համար, իսկ Հովհաննեսին ծայնային հաղորդագրություն է ուղարկում և խնդրում ժամը 12:00-ին գալ կոչի տեքստի վրա աշխատելու նպատակով: Վ.Գալստանյանը ծայնային հաղորդագրություն է

ուղարկում նաև Լիդիային և խնդրում ժամը 11:30-12:00-ին տեսախցիկով գալ իր մոտ:
Ա.Սարգսյանն առաջարկում է Հերացի փողոցը կաթվածահար անել, արդյունքում Մասիվ, Ավան, Մոնումենտ և մինչև Խանջյանի վերջ փողոցները փակվում են, ինչին ի պատասխան Ի.Սարգսյանը գրում է, որ 17:00 փակվում է Հերացի փողոցը:

Վ.Գալստանյան - Ժամը հինգին, չէ՞:

Ի.Սարգսյան - Հա, էդ ա, ժամը հինգին որ փակենք, Կոմիտասի Լամբադան որ փակենք:

Վ.Գալստանյան - Հեշտ ա Լամբադան փակելը:

Ա.Սարգսյան - Լամբադան փակում ես, Ազատությունը բաց ա մնում: Ազատությունը փակում ես, սաղ էթում փակվում ա:

Հ.Շահնազարյան - Եթե Ռայկոմի խաչմերուկը փակում ես, սաղ փակվում ա, պրոստո Ռայկոմին խաչմերուկին քիպ կպած քաղմաս ա, թե չէ Ազատությունը կփակվի, ոնց որ միշտ փակել ենք:

Ի.Սարգսյան - Մյասնիկյանն ենք փակել:

Վ.Գալստանյան - Ժամը հինգին, մենակ Նորագավիթը Փարաքարը ավելանան ժամը վեցին, որ թափը գնում ա, մեկ ասում ես ոնց որ կանգնել ա, մեկ էլ դմփ դմփ նորից, էդ բանը պիտի տրվի անպայման:

Ի.Սարգսյան - (մնացած խոսակցությունը լսելի չէ): Գա՞ն Փարաքար:

Ա.Սարգսյան - Գնա Նորագավիթ:

Ի.Սարգսյան - Թող գան Փարաքար: Նորագավիթի մասը հեշտ ա, խաչմերուկի մասը:

Հին ճամփեն, նոր ճամփեն, Խարբերդ, տոաս, սաղ փակվում ա:

Վ.Գալստանյան - Շեշտում ես Իգոր, նկարողներին՝ անպայման:

Ի.Սարգսյան - Հա կասեմ:

Վ.Գալստանյան - Անպայման շեշտի կամ էլ Լիդիային կասենք:

Ա.Իսրայելյան - Մի հատ նորից ճշտենք. Խարբերդ՝ 16:00, Աշտարակ 16:30, Նորգավիթ՝ 17:00, Աբովյան՝ 17:00, Հերացի՝ 16:00, Ազատություն՝ 16:00, Փարաքար՝ 18:00:

Ի.Սարգսյան - Ութին հավաքվում են աերոպորտ:

Ա.Սարգսյան - Ցավդ տանեմ, մի իրանց ասա, կարող ա սիտուացիան նենց լինի, եթե կարան պահեն, չբացեն, պետք լինի մենք էլ (մնացած խոսակցությունը լսելի չէ), մի ասա

երեք ժամ, ասա փակում եք, մինչև վերջ պահում եք, մինչև չասենք, պետք լինի սրբազանը կոչ կանի կրացեք, ասա՝ մինչև սրբազանը կոչ չանի՝ չբացեք: Իգոր, սրբազանը մինչև կոչ չանի, չենք բացում, վայր: Մի ասա մինչև յոթը պահեք, յոթին աէրոպորտ: Ասա՝ դուք աէրոպորտի հետ գործ չունեք, դուք ձեր պոստերը պահեք, սրբազանը:

Ի.Սարգսյան - Տենց էլ ասել եմ:

Ամփոփելուց առաջ Ա.Իսրայելյանը համոզմունք է հայտնում, որ ամեն ինչ լավ է լինելու և Աստծո գործ է:

Վ.Գալստանյան - Ուրիշ ի՞նչ կա վաղվա խմբերից, ո՞վ կա:

Ա.Իսրայելյան - Գեղամը:

Վ.Գալստանյան - Գեղամենց ի՞նչ եք ասելու:

Ա.Իսրայելյան - Երևանի մեջ:

Ի.Սարգսյան - Գեղամը ինքը բան ուներ, բայց իրա էդ խումբը պիտի Նորագավիթ էթա:

Ա.Իսրայելյան - Չէ, ուժեղ ա լինելու:

Վ.Գալստանյան - Առաջին հարվածից կերևա ո՞նց ա լինելու, եթե Տավուշը հաջողվեց, մնացածը արդեն:

Ի.Սարգսյան - (մնացած խոսակցությունը լսելի չէ) կզանգեմ:

Վ.Գալստանյան - 140 հոգի են լինում, ընդել նորմալ ա պրինցիպի: Հենց Տավուշը հաջողվեց, մնացածը արդեն (մնացած խոսակցությունը լսելի չէ):

Ա.Սարգսյան - Թող Փարաքարը շատ լինեն, էլի:

Վերը նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ստացված տվյալներով պարզվել է, որ.

«Սրբազան պայքար» շարժման անդամները մտադրվել են իրենց ակտիվ գործողությունների ընթացքում՝ բազմաթիվ 20-25 հոգանոց խմբերի միջոցով՝

• փակել Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր միջպետական ճանապարհները,

• փակել Երևան մուտք գործող բոլոր ճանապարհները,

• վառել ավտոմեքենաներ,

• ջարդել խանութներ,

• փողոցներում շաղ տալ ավտոմեքենաների անիվները վնասող աստղիկներ՝ ավտովթարներ ստեղծելու և այդ կերպ ճանապարհները փակելու, խցանումներ առաջացնելու նպատակով,

• խափանել 20-30 ինտերնետի «մայրեր»,

• կատարել հոսանքազրկումներ, ինչը կբերի՝ բանկերի ու մեծ խանութների աշխատանքի խափանման,

• պայթեցնել «սալյուտներ»՝ սյուներին, դարպասներին, պատերին,

• կիրառել ծխարձակող միջոցներ,

• ներկով և յուղով լցված տարաներ նետել ավտոբուսների դիմապակիների վրա՝ նրանց ընթացքը կանգնեցնելու և խցանումներ առաջացնելու համար

• վնասել տրոլեյբուսի գծերը,

• խափանել ոստիկանության զորքերի տեղակայման վայրերի դարպասները,

• թունելներում վառել խոտերի տուկեր՝ խցանումներ առաջացնելու համար,

• հաքերների միջոցով հազարավոր նամակներ ուղարկել նախարարություններ՝ պաշտոնական կայքերը «կոտրելու» և աշխատանքը պարալիզացնելու համար, փորձելու են կոտրել (հաքելու) Կառավարության կայքը,

• արհեստական բանականության միջոցով ստեղծել կեղծ խոսակցություններ բարձրաստիճան ոստիկանների միջև և այդ ձայնագրությունները տարածել համացանցում,

• ձեռք բերել ՔՊ պատգամավորների, ոստիկանապետի ու այլ պաշտոնյաների հեռախոսահամարները, ՔՊ պատգամավորների տների դիմաց իրականացնել բողոքի ակցիաներ:

• նշված գործողությունները նկարահանել և առցանց ռեժիմով հրապարակել համացանցում:

Միաժամանակ նախատեսվել է երևանում կազմակերպել հանրահավաք՝ իշխանության վրա ճնշում գործադրելու համար, իսկ գլխավոր հարվածն իրականացնելու էին այդ խմբերը, նպատակ ունենալով ջլատել ոստիկանական ուժերը, որը հնարավորություն կտար «Սրբազան պալքար» շարժման անդամներին մուտք գործել ՀՀ ազգային ժողովի, ՀՀ կառավարության շենքեր՝ իշխանությունը յուրացնելու նպատակով:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ստացված տվյալներով պարզվել է, որ վերը նշված հանցավոր արարքների նախապատրաստական բոլոր գործողությունները մի խումբ անձանց հետ, նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, համակարգել և պլանավորել են Վազգեն Պետրոսի Գալստանյանը, Արթուր Լավրենտի Սարգսյանը և այլ անձինք:

3. Քրեական վարույթով մեղադրյալ Բագրատ Գալստանյանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրությամբ, համաձայն որի՝ նշված գործողության ընթացքում ի թիվս այլնի՝ հայտնաբերվել են մարզերի, շրջանների, համայնքների, պատասխանատուների և անձանց թվերի վերաբերյալ տպագիր ցուցակներ, «Սրբազան պայքար» շարժում գրառմամբ ձեռագիր փաստաթուղթ, Երևան քաղաքի քարտեզը, երկու հատ «ռուպոր»-բարձրախոսներ, 122 հատ ծուխ առաջացնող միջոցներ, 7 հատ ներկանյութերի մետաղական տարաներ, 6 թղթե արկղեր՝ լցված ներկանյութերի մետաղական տարաներով, 1 հատ տեսանկարահանող անօդաչու սարք, մետաղյա ամրանների նմուշներով կտորե պայուսակ, 5 հատ էլեկտրոնային կրիչներ, 4 հատ անլար բարձախոսներ, 3 հատ դյուրակիր համակարգիչներ, սնուցման լարեր, անձանց տվյալներով ձեռագիր ցուցակ, 1 պոլիէթիլենային փաթեթ՝ լցված մետաղական գամերով, 15 հատ մետաղական ձողեր, մետաղ որոնող սարք, հեռարձակում ապահովող սարքավորում, գլոբալ հեղափոխություն իրականացնելու վերաբերյալ գրառումներով փաստաթուղթ, «Ազատագրում» վերնագրով և գրառումներով փաստաթուղթ, իշխանափոխության իրականացման, անձանց խմբերի տվյալներ պարունակող տարբեր ձեռագիր և տպագիր գրառումներով փաստաթղթեր, պլան-սխեմաներ՝ այդ թվում նաև օտարալեզու, իշխանափոխության իրականացման ռազմավարություն պարունակող փաստաթղթեր, նոթատետր:

4. Մեղադրյալ Մովսես Շարբայանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրությամբ, համաձայն որի՝ նշված գործողության ընթացքում ի թիվս այլնի՝ հայտնաբերվել են ծուխ արձակելու համար նախատեսված առարկա՝ «45 seconds purple NS-SM045» գրառմամբ, մեկ հատ բարձրախոս, մեկ հատ որսորդական հրացան, երկու տարաներ՝ լցված վառոդով, մեկ փաթեթ՝ լցված որսորդական հրացանից կրակելու համար նախատեսված փամփուշտների հրապատիճներով, 3 հատ որսորդական

հրացանից կրակելու համար նախատեսված փամփուշտների լիցքավորման համար նախատեսված պարագաներ, 33 փամփուշտներ, որոնցից 14-ը չկրակված՝ տեղադրված պատրոնդաշում: 3 հատ դյուրակիր համակարգիչներ, 13 հատ էլեկտրոնային կրիչներ, երկու թերթից բաղկացած փաստաթուղթ՝ թիվ 55035 զորամասի սպաների, ենթասպաների և պայմանագրային զինծառայողների հեռախոսահամարների գրառմամբ:

5. Մեղադրյալ Տիգրան Գալուստի Գալստյանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրությամբ, համաձայն որի՝ նշված գործողության ընթացքում ի թիվս այլնի՝ հայտնաբերվել են մեկ հատ մետաղյա կառուցվածքով առարկա (չբացված վիճակում 20 սմ, բացված վիճակում՝ 51 սմ չափսերի) և 57 հատ ծուխ արձակող միջոց:

3. Մեղադրյալ Լիդյա Մանթաշյանի բնակարանում կատարված խուզարկության արձանագրությամբ, համաձայն որի՝ նշված գործողության ընթացքում ի թիվս այլնի՝ հայտնաբերվել են անձանց ցանկի պլանավորման վերաբերյալ գրառումներ պարունակող նոթատետր, անձանց անվան տեղերը չլրացված վկայականներ, «Ժողովրդական անցման ստրատեգիա» վերտառությամբ, ըստ փուլերի շարժման, անձանց ցուցակների, մարդկային ռեսուրսների վերաբերյալ ձեռագիր գրառումներով փաստաթուղթ, տարբեր անձանց անվանումներով, տարբեր գործողությունների և այլ տվյալների վերաբերյալ նոթատետր:

4. Մեղադրյալ Լիդյա Մանթաշյանի բնակարանի խուզարկությամբ հայտնաբերված փաստաթղթերը զննելու մասին արձանագրությամբ, համաձայն որի՝

➤ «Ժողովրդական անցման ստրատեգիա» վերտառմամբ փաստաթուղթն ունի հետևյալ բովանդակությունը.

«Գործողության ժամանակահատվածը. 2024 թվականի հուլիսի 23-ից մինչև սեպտեմբերի 30-ը Նպատակ. Նիկոլ Փաշինյանի ռեժիմի հեռացում և իշխանության նոր համակարգի անցում՝ ժողովրդի, եկեղեցու, սփյուռքի և մասնագիտական կառույցների մասնակցությամբ:

Յուրաքանչյուր փուլի համար առկա է ամբողջական մանրամասն նախագիծ:

Պլանի կառուցվածք

1. ՓՈՒԼ 0 - Գաղտնի ալիք (հուլիսի 23 - օգոստոսի 1)

Ստեղծվում է անհանգստության և հիասթափության ֆոն: Նիկոլ Փաշինյանին ծաղրի առարկա դարձնելը, նրան վերածելը «ժողովրդական մեմի»: Օգտագործվում են TikTok-ը, «շշուկային» արշավները: Սկսվում է իշխանական հիմքի ներքին ապակայունացումը:

2 ՓՈՒԼ 1- Ներսից քայքայում (օգոստոսի 2-11)

Թիրախային ապարեղեկավորություն «գաղտնի բանակցությունների» մասին՝ խուճապի սերմանում իշխանական համակարգի ներսում: Վստահության կորուստ՝ Նիկոլի մերձավորների շրջանակներում: Հաստատումներ՝ ուս գործընկերների միջոցով:

3. ՓՈՒԼ 2 - Լուռ ճնշում (օգոստոսի 12-21)

Հանրային հանդիպումներ առանց մեկնաբանությունների, լուսանկարների փարածում: Դաշնակիցների հավաքագրում, դերաբաշխում: Բազրափ Սրբազանը շրջում է թեմերով: Սփյուռքը պարբերաբար սկսում է:

4. ՓՈՒԼ 3 - Տազնապի ազդանշան (օգոստոսի 22-31)

Առաջին աղոթքները, ուղերձները, հուզական ռիլսերը: Հայտնվում են խորհրդանիշներ և կարգախոսներ: Հայտարարվում է «ժողովրդական որոշման» եռօրյա:

Նախաձեռնող խմբերի անդամներն սկսում են ակտիվորեն ներկայանալ մեդիա հարթակներում:

5. ՓՈՒԼ 4 - Շարժում և վերադարձ (սեպտեմբերի 1-13)

Սփյուռքի ժամանում: Կազմակերպվում է ֆորում սեպտեմբերի 14-ին: Ավարտվում են ենթակառուցվածքների նախապարաստումը և իշխանություններից օրակարգերի ստեղծման խլումը: Շար ակտիվ լուսաբանում լրավամիջոցներում՝ իշխանությունների լիակատար անտեսմամբ:

6. ՓՈՒԼ 5 - Մեկ ծայն (սեպտեմբերի 14-19)

Վերջնական կոչեր: Բարձրաձայնվում են արժեհամակարգային պահանջներ:

Հայտարարվում է եռօրյա փողոցային նախաձեռնության ծրագիրը: Եկեղեցին ուժեղացնում է հոգևոր օրինականությունը: Քննարկվում է Փաշինյանին ու մերձավորներին եկեղեցուց հեռացնելու հարցը: Եթե հաջողվի համոզել Գարեգին Բ-ին՝ սկսվում է գործընթացը, որն ուժեղ ազդակ կլինի միավորման համար: Սփյուռքն ու արտերկրի հայ համայնքները կազմակերպում են բողոքի ակցիաներ Հայաստանի դեսպանատների առջև:

7. ՓՈՒԼ 6 - Որոշիչ փուլ (սեպտեմբերի 20-21)

Սեպտեմբերի 20 - շարժման գազաթնակներ: Սեպտեմբերի 21՝ Անկախության օրը - ժողովրդի կամքի գործողություն, հրաժարականի պահանջների բարձրաձայնում, անցման մեկնարկ:

8. ՓՈԽԼ 7 - Նոր ուժ (սեպտեմբերի 22-30)

Կազմվում է ժամանակավոր խորհուրդ: Սկսվում է ինստիտուցիոնալ անցումը և նոր կուրսի միջազգային ճանաչման գործընթացը: Սկսվում է նախկին համակարգի մնացորդների մաքրում:

Տեխնիկական հենասյուններ՝

Կոորդինացիոն խորհուրդ

Տեխնոկրապ աշխատախումբ

Իշխանությանը եկեղեցուց հեռացնելու իրավասությամբ եկեղեցի

Սփյուռք և օլիգարխիա՝ որպես ռեսուրսային թիկունք

TikTok, Telegram, Instagram-որպես ազդեցության գործիքներ

Գլխավոր կարգախոսը՝ «Հեռացի՛ր, որ ապրենք»

Նախաձեռնող խմբեր

1. Հիմնական թիմ և նախաձեռնողներ

Նախաձեռնող խումբ 1 (զգացմունքային բլոկ)

- Բազրապ Սրբազան
- (ամենաբարձր և կայուն վարկանիշով, անցումային ժամանակահատվածի վարչապետի թեկնածու)
- Արմեն Զարչյան (ինտելիգենցիայի ներկայացուցիչ).
 - ----անցումային ժամանակի վարչապետի թեկնածու, Սահմանադրական կարգի պահպանման երաշխավոր
 - ՀՅԴ ներկայացուցիչ սփյուռքից (Ֆրանսիա)
 - Ռուսաստանաբնակ հայ սփյուռքի ներկայացուցիչ
 - Զոհված հերոսի մայր
 - Գործող կամ նախկին զինվորական
 - Կին հասարակական գործիչ

2. Ռազմավարական խումբ 2 - ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներ

1.

- 2.
- 3.
- 4.
- 5.
- 6.
- 7.
- 8.
- 9.
- 10.

- Քաղաքական տեխնոլոգներ, կոորդինատորներ, մեդիա պլանավորողներ

- Աշխատանքային և տեխնոկրատ խմբերի ղեկավարներ

3. Աշխատանքային խմբեր և կամավորական ցանց (= 500-800 մարդ)

- Ղեկավարներ (լոգիստիկա, ծայնային համակարգեր, անվտանգություն, փաստաթղթեր)

- Տարածքային կոորդինատորներ

- իրավաբանական և միջազգային խումբ

- Բողոքի միջնորդներ (ոստիկանության և դիտորդների հետ աշխատանք)

- Անվտանգ երթուղիների և ապաստարանների ցանց

4. Առցանց ակտիվ (=1,500-2,500 մարդ)

- Tik Tok-բլոգերներ, Instagram-հեղինակներ, Telegram-ի օպերատորներ

- Ռիլսերի, մեմերի, տեսանյութերի, վիրուսային պարմությունների ստեղծողներ

- Ցանցային խմբերի ադմիններ, հեշթեգ հսկողություն, ավտոմատ հրապարակում

- Շշուկային ապատեղեկավարության տարածողներ (նաև մեկնաբանություններում և սթորիներում)

5. Փողոցային ֆիզիկական պահուստ (= 10,000-15,000 մարդ)

- Առաջին ալիք - երթերի հիմնական մասնակիցներ

- Երկրորդ ալիք — ընտանիքներ, երիտասարդություն, ուսանողներ

- Երրորդ ալիք — համակրվողներ և «վճռողներ» (միանում են կոլմինացիոն փուլում)

- Նպատակ՝ սեպտեմբերի 20-21 համար ապահովել 80,000 մարդու իրական

- մոբիլիզացում՝ ներառյալ սփյուռքից և գյուղերից ժամանածները:

6. Սփյուռք

- Ֆորումի մասնակիցներ (սեպտեմբերի 14)
- Ներկայացուցիչներ Ռուսաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից
- Ֆինանսական և տեղեկատվական աջակցություն, հատուկ խմբեր եռօրյա փուլին

7. Եկեղեցական ցանցեր

- Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր թեմային կառույցներ
- Վանական միաբանություններ և ծխական համայնքներ սփյուռքում
- Ծեսեր, ուղերձներ, մեղքերի թողություն, լույսություն՝ որպես ճնշման ձև 8.

8. Խորհրդանշական ռեսուրս

- Երաժիշտներ, դերասաններ, ուսուցիչներ, բժիշկներ, գրողներ
- Մեդիա և բարոյական հեղինակություններ ձևավորում են հուզական ալիքը

Անհրաժեշտ է.

- համոզեմ Ռոբերտ Քոչարյանին և Սերժ Սարգսյանին հասնել հաշտության և միասնական աջակցության

- Սրանալ ռուսաստանյան հայազգի օլիգարխների աջակցություն և միջոցներ
- Համոզել Գարեգին Բ Կաթողիկոսին ակտիվություն դրսևորել (հնարավոր է ներգրավել նրա եղբորը՝ Տ. Եզրասին Մոսկվայից)

Մարդկային ռեսուրս

- Գազիկ Ծառուկյան (ՌԴ հետ լավ կապերով) — 15 000-20 000 մարդ + ուղերձ
- Սամվել Կարապետյան (Տաշիր) - 5000-8000 մարդ + ուղերձ
- Սամվել Ալեքսանյան (ԼՖիկ) - 5 000 մարդ
- Ռոբերտ Քոչարյան –
- ՀՅԴ-
- Սերժ Սարգսյան –
- Գազարոն Արմենիա –
- Ռուսական երկաթուղիներ (ՀԿԵ) –
- Արցախցիներ
- Նախկին զինվորականներ –
- IT ոլորտի բիզնես էլիտա
- Երիտասարդություն –

- Ազգային փոքրամասնություններ (ասորիներ, եզդիներ) - 2000-3000

Հակաճգնաժամային պլան

1. Ի՞նչ անել, եթե Նիկոլը՝

- Մինչև սեպտեմբերի 14-ը ստորագրում է համաձայնագիր Ալիևի հետ
- Սկսում է ճնշում եկեղեցու նկատմամբ (ծերբակալություններ, սպառնալիքներ)
- Ձերբակալում է առանցքային դերակատարներից մեկին

Պլան B/C — օրինակ՝ ակտիվ ուժերի շտապ վերաուղղում դեպի ռուսական և եվրոպական խորհրդարանների, փողոց դուրս գալու արագ ռեակցիա՝ առանց 20 սեպտեմբերի սպասելու, այլ իրադարձությունից 72 ժամ անց:

2. Խորացնել TikTok/Instagram/Telegram-ի դերը

Ավելացնել՝

«Թվային հարվածների խումբ» - 50-100 բլոգեր, որոնց աշխատանքը համակարգվում է առանձին

Telegram ալիքում և որոնք աշխատում են հեշթեգերով

«Մեկնաբանողների բանակ»-500 հոգի, որոնք արժեզրկում են իշխանամետ հարթակները:

3. Եկեղեցի - կարգախոսից գործի անցում

Ներառել

• «Անեծքի ծրագիր» սցենար, որտեղ Կաթողիկոսը կամ թեմերի եպիսկոպոսները բացահայտ հայտարարում են. «Եկեղեցին այլևս չի օրհնում այս իշխանությանը»

• Երկրի ազատագրման համար գաղտնի կրոնական ծառայություններ սկսելու քայլեր:

4. Բողոքի միջնորդներ Համառոտ նկարագիր,

• Կազմել ոստիկանությանը տանող 5-7 «Կամուրջների» ցանկ՝ նախկին սպաներ, քահանաներ, փաստաբաններ, ովքեր ոստիկանությանը կբացատրեն մարդկանց բարոյական իրավունքները

• Փողոցային երթևեկության յուրաքանչյուր հատվածին տալ դաշտային բանակցող:

5. Պարզ բացատրություն ժողովրդին Սյրեղծել՝

• 3 պարզ ուղի (մինչև 59 վրկ) - ինչ ենք ուզում, ինչու Նիկոլը չի կարող մնալ, ինչ կլինի հետո

- Բացառությամբ ծաղրանկարներ՝ Փաշինյան և թուրքական դրոշ, եկեղեցին՝ շղթայված, ժողովուրդը՝ դափարկ սեղանի շուրջ:

Երբ հասնում ենք համաձայնության, բոլոր առանցքային դերակատարները պետք է

- Հաստատեն մասնակցությունը

- Փաստագրին հավատարմությունը հաստատված պլանին

Հնարավոր է՝ անհրաժեշտ լինի բոլոր առանցքային դերակատարների հավաք մեկ չեզոք երկրում՝ ռուսական կողմի ներկայացուցչի մասնակցությամբ:

➤ **Ձեռագիր գրառում պարունակող փաստաթուղթն ունի հետևյալ բովանդակությունը.**

«Շաբաթը 1 օր որևէ մարզում պլակատ կպցվի

Նիկոլ, տեղական ՔՊ

Փողոց, շներին շոր կարել Նիկոլի նկարով

Ներկեր առնել, շարունակել գրել տվյալ օրվա ակտուալ թեմայով

Հետիոտնային 1-ին գծի վրա գրություններ: ?գրության տեքստը մտածել?

Մարզային հանդիպումներում, երիտ. Խմբի հանդիպումներում «Հրաժարիմքն» ասել՝ խորհրդատվություն մատուցելու համար:

54:38

55:48

25.06

19.00

Էլիտ Պլազա

Խորենացի

099576073»:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ Արթուր Սարգսյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու պայման հանդիսացող՝ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածն առկա է, ինչը փաստվում է մեջբերված փաստական տվյալների վերլուծությամբ:

Կալանքի հիմքերը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր ձևավորած նախադեպային իրավունքում առանձնացրել է հանցագործության համար մեղադրվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր.

մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տե՛ս Stogmuller v. Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, §15), վտանգը, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը (տե՛ս Wemhoff v. Germany, 1968 թվականի հունիսի 27, §14) կամ կկատարի նոր հանցանքներ (տե՛ս Matznetter v Austria, 1969 թվականի նոյեմբերի 10, §9) կամ կկատարի հասարակական անկարգություններ (տե՛ս Letellier v. France, 1991 թվականի հունիսի 26, §51):

Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքում ևս մշտապես ընդգծվել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդվել ու զարգացվել են քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում (1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում) թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, հարուցված քրեական գործի (վարույթի), որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման (հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման) առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁴:

Անդրադառնալով կալանավորման հիմքերին՝ Վճռաբեկ դատարանն Արամ Ճուղտյանի վերաբերյալ գործով որոշմամբ փաստել է. «(...) ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

«(...) Կալանավորման կիրառման հիմքերն ունեն կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ: Ընդ որում, այդ կանխատեսող գործողություններն անհրաժեշտ է հիմնավորել քրեական գործով ձեռք բերված որոշակի նյութերով, որով էլ վերջին հաշվով որոշվում է կալանավորման կիրառման հիմնավորվածությունը:

⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ»⁵:

Վճռաբեկ դատարանը Հարություն Պետրոսյանի գործով որոշմամբ վերահաստատել է, որ խնդրո առարկա հարցի առնչությամբ ձևավորվող դատողությունները չեն կարող չկառուցվել ենթադրությունների վրա, քանի որ կալանավորման հիմքերն ունեն կանխատեսական բնույթ, և ենթադրում են ապագային վերաբերող իրադարձություններ⁶:

Այնքանով, որքանով կալանավորման հիմքերն ունեն կանխատեսական բնույթ, դրանց առկայության մասին վկայող, այսինքն՝ կասկածը հիմնավորող հանգամանքները սպառիչ կամ սահմանափակ չեն և չեն կարող լինել: Անձի կալանավորման հիմքում կարող է դրվել ցանկացած այնպիսի տեղեկություն, փաստ, ապացույց, որն ինքնին կամ այլ փաստերի հետ համակցությամբ կարող է ողջամիտ և հիմնավոր մտահոգություն առաջացնել առ այն, որ ազատության մեջ մնալու դեպքում անձը կարող է կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածում նշված գործողություններից որևէ մեկը: Ընդ որում՝ կալանավորման հիմքերից յուրաքանչյուրի բնույթով է պայմանավորված, թե կոնկրետ տեղեկությունը կամ ապացույցը կարող է արդյոք վկայել այդ հիմքի առկայության մասին, թե ոչ: Այդ հաշվառմամբ էլ դատական իրավունքն ու պրակտիկան առանձնացրել են որոշակի հանգամանքներ, որոնք էական նշանակություն կարող են ունենալ կալանավորման մեկ կամ մի քանի հիմքերի առկայությունը գնահատելիս: Այդ մասին կարող են վկայել մեղսագրվող հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը բնութագրող հանգամանքները, անձի դիրքը՝ զբաղեցրած ներկա կամ նախկին պաշտոնը, հարաբերությունները, կապերն ու դրանց արդյունքում ազդեցության հնարավորությունները, զգալի ֆինանսական կարողությունները, վարքագծի կոնկրետ դրսևորումները և այլն:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանը, Տիգրան Պետրոսյանի գործով որոշմամբ կրկնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով, արձանագրում է, որ «կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանը փաստել է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք

⁵ Տե՛ս Արամ Ծուղուրյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի օգոստոսի 30-ի թիվ ՎԲ-132/07 որոշումը:

⁶ Տե՛ս Հարություն Իգիթի Պետրոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2018 թվականի ապրիլի 18-ի որոշումը:

իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալու: Հետևաբար խնդրո առարկա հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի վերը նշված հանգամանքների փոխազդեցության, հարաբերակցության բացահայտման, այդ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում ձևավորված համոզմունքի վրա, ինչն իր հերթին պետք է արտացոլվի դատարանի կողմից կայացվող դատական ակտում⁷:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը քաղաքացի Վահան Խանզադյանի թիվ 68571/11 գանգատի ընդունելիության հարցի քննարկման արդյունքում կայացրած իր՝ 2014 թվականի մարտի 11-ի որոշմամբ գանգատը համարել է անընդունելի, իսկ Վահան Խանզադյանին անազատության մեջ պահելու համար Հայաստանի ներպետական դատական ատյանների պատճառաբանությունները՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի տեսանկյունից՝ բավարար: Ըստ այդ որոշման՝ Վահան Խանզադյանը մեղադրվել է այն բանի համար, որ աշխատելով որպես ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության քննիչ, չարաշահել է իր լիազորությունները և խեղաթյուրված արձանագրել է իր վարույթում քննվող քրեական գործերից մեկով վկայի ցուցմունքները: Հայաստանի ներպետական դատական ատյանները նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, ապա կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումները պատճառաբանել էին այն հանգամանքով, որ նախկինում աշխատելով որպես քննիչ և մեղադրվելով պաշտոնեական լիազորությունները չարաշահելու մեջ, ազատության մեջ լինելու դեպքում, օգտագործելով նախկին պաշտոնի հետ կապված կապերը, հնարավոր է՝ խոչընդոտի քննության ընթացքին մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Եվրոպական դատարանն իր՝ վերոնշյալ որոշմամբ համաձայնվել է Հայաստանի դատական ատյանների հետևությունների հետ՝ նշելով. «Դատարանը կրկնում է, որ դիմողին կալանքի տակ պահելու հիմնական պատճառաբանություններից մեկը, որ ներկայացրել էին ազգային դատարանները, եղել է նրա կողմից արդարադատությանը միջամտելու հավանականությունը: Առկա է եղել վտանգ, որ ազատության մեջ լինելու պարագայում, նա կմիջամտի քննությանը՝ հաշվի առնելով իր նախկին աշխատանքը ոստիկանությունում և այն, որ նա մեղադրվել է իր նախկին ծառայողական գործունեության հետ սերտ կապված

⁷ Տե՛ս Տիգրան Հարությունի Պետրոսյանի վերաբերյալ ԵԿԴ/0084/06/16 գործով Վճռաբեկ դատարանի՝ 2017 թվականի նոյեմբերի 15-ի որոշումը:

հանցագործություն կատարելու մեջ: Այսինքն՝ ազգային դատարանները կարող էին հիմնավոր կերպով անհրաժեշտ համարել նրա կալանքի տակ պահելը»:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով անձի նկատմամբ խափանման միջոց ընտրելիս նրան վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը հաշվի առնելու կարևորությանը, իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ թեև մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք էական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղսագրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին⁸:

Վարույթի նախաքննությունը գտնվում է սկզբնական փուլում, և դեռևս հարցաքննված չեն վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների, դրանց փոխկապվածության, նախնական պլանավորվածության մասին վկայող հնարավոր տեղեկություններ ունեցող անձինք, այդ թվում՝ հանցավոր խմբի ենթադրյալ անդամներ, որոնց հետ Արթուր Սարգսյանը անձամբ ծանոթ է, իսկ որոշների հետ գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ, և վերջինս ազատության մեջ գտնվելով, կարող է խոչընդոտել քրեական վարույթով ապացույցների ձեռք բերման գործընթացին՝ դեռևս չհարցաքննված անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով, ներառյալ՝ օգտագործելով դիրքն ու հեղինակությունը:

Հարկ է նշել նաև, որ Արթուր Սարգսյանը նախկինում զբաղեցրել է մի շարք պաշտոններ, ներկայումս էլ հանդիսանում է ՀՀ ԱԺ պատգամավոր, ինչը ողջամտորեն ենթադրում է որոշակի հեղինակության, կապերի և լծակների առկայություն ինչպես պետական համակարգի տարբեր օղակներում պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ՝ հասարակության շրջանում, որպիսի հանգամանքն էապես բարձրացնում է նրա կողմից ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու հավանականությունը:

Միևնույն ժամանակ, Արթուր Սարգսյանին մեղսագրվող ենթադրյալ հանցանքների կատարման եղանակը, դրանցում ներգրավված անձանց քանակը և նրանց հետ Արթուր Սարգսյանի ունեցած կապերը հիմնավոր կասկած են հարուցում այն մասին, որ նա կարող է ոչ միայն ապօրինի ազդեցություն ունենալ վարույթով ներգրավված անձանց, գործով դեռևս չհարցաքննված անձանց վրա, այլ նաև՝ թաքցնել կամ ոչնչացնել վարույթի համար նշանակություն ունեցող նյութերը:

Հետևաբար, այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված կայուն նախադեպային իրավունքն այն

⁸ Տե՛ս Վահագն Պողոսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԿԴ1/0062/06/12 որոշումը:

մասին, որ անձի ազատության իրավունքը սահմանափակելիս կարևոր դերակատարում ունի նրա՝ հասարակությունում ունեցած դերը, զբաղեցրած պաշտոնն ու հնարավոր ազդեցությունը գործով անցնող վկաների վրա, մինչդեռ տական վարույթի բնականոն ընթացքին խոչընդոտելու նրա հնարավորությունները:

Բացի այդ, մեղսագրվող արարքների փաստական հանգամանքները, նախապատրաստվող հանցագործությունների մանրակրկիտ պլանավորվածությունը, ենթադրյալ հանցանքներին մեծաթիվ մարդկանց ներգրավվածությունը, ինչպես նաև՝ ենթադրյալ հանցանքների կատարման շարժառիթները և Արթուր Սարգսյանի ակտիվ դերակատարությունը, թույլ են տալիս հիմնավոր եզրահանգում կատարել առ այն, որ վերջինս, ազատության մեջ մնալով կարող է ձեռնամուխ լինել արդեն իսկ նախապատրաստված հանցանքների իրագործմանը, այդ կերպ կատարելով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցանք:

Բացի այդ, թեև վերագրվող արարքի ծանրության աստիճանն ինքնին հիմք չէ կալանավորման հիմքերն առկա համարելու համար, սակայն էական նշանակություն ունի դրանք գնահատելիս, ինչը Տիգրան Պետրոսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման համատեքստում՝ գործի վերը նշված հանգամանքներն ու դրանցից բխող ռիսկերը համակցության մեջ գնահատելիս, թույլ է տալիս պնդել, որ առկա է նաև հիմնավոր կասկած, որ ազատության մեջ մնալու դեպքում Արթուր Սարգսյանը կարող է դիմել փախուստի:

ՀՀ սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պալատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պալատավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պալատավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահին»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պալատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պալատավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պալատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանին ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու համար ՀՀ ԱԺ նախագահին դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ ՈՒ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արթուր Լավրենտի Սարգսյանին ազատությունից զրկելու վերաբերյալ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ



ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ